



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆՏՈՆԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԲԼԱՆՔԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ
ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ԱՆՏՈՆԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԼԱՆՔԻ
ՈՐ ՆԻՍ, ՖՐԱՆՍԻԱ**

Ձերդ Սրբազնություն,

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր ողջոյնն ու օրհնութիւնները:

Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանից գոհունակութեամբ տեղեկացանք Կաթողիկ Եկեղեցու անդաստանում Ձեր երկարամեայ եւ արդիւնաշատ ծառայութեան վերաբերեալ: Ուրախ ենք մեծապէս, որ Դուք, որպէս բարի եւ հաւատարիմ ծառայ Քրիստոսի, տասնեակ տարիներ հոգու եւ մտքի Ձեր կարողութիւնները անձնուիրաբար ի սպաս էք դնում Կենաց Խօսքը սերմանելու սրբազան առաքելութեան իրականացմանը, որպէսզի հաւատացեալները առաւել զօրանան հաւատի, յոյսի ու սիրոյ մէջ եւ աստուածճանաչողութիւնը պայծառօրէն լուսաւորի ու առաջնորդի մարդկային մեր կեանքը:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր յարգալիր վերաբերմունքին եւ մատուցած օգտաշատ ծառայութիւններին: Հայոց Մեծ եղեռնի, հայ գրերի զիւտի 1600-ամեայ յորելեանի եւ այլ առիթներով կազմակերպելով ցուցահանդէսներ, դասախօսութիւններ ու Էկումենիկ արարողութիւններ, Դուք գնահատելի աւանդ էք բերել մեր ժողովրդի քրիստոնէական անցեալն ու ստեղծած հոգեւոր հարուստ ժառանգութիւնը Նիսի հասարա-

կական լայն շրջանակներին ներկայացնելու գործում: Մեր ժողովրդի զաւակների համար ուրախութեան առիթ է նաեւ Նիսի կենտրոնական կաթողիկէ Մայր Տաճարում Ձեր ջանքերով տեղադրուած հայկական խաչքարը՝ նուիրուած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի դարակազմիկ յոբելեանին, որը եղբայրական ոգու գեղեցիկ արտայայտութիւն է մեր եկեղեցիների միջեւ: Ձեր գործերում «զի բարի կամ զի վայելուչ, զի եղբարք բնակին ի միասին» սաղմոսի բաղձալի պատգամն ենք տեսնում մարմնաւորուած, որով Դուք արժանապէս վաստակել էք անկեղծ սէրն ու երախտագիտութիւնը Նիսի հաւատաւոր հայութեան:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առանձնակի ուրախութեամբ բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Ն Ե Ր Ս Է Ս Շ Ն Ո Ր Հ Ա Լ Ի

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի եւ Իր հանապազ օրհնութեամբ զօրացնի Ձեզ բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ «Իբրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի» շարունակելու արդիւնաշատ Ձեր ծառայութիւնը ի փառս Աստուծոյ եւ ի բարօրութիւն հաւատաւոր Ձեր հօտի:

Թող Բարին Աստուած օրհնի մեր Սուրբ Եկեղեցիների բարեկամական յարաբերութիւնները եւ խաղաղ ու անվրդով պահպանի համայն մարդկութեանը աստուածային Իր սիրոյ ու խնամքի մէջ:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 7-ոյ Փետրուարի
ի թուին Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 460